

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ

«Կգաճ հզոր հայ մարդիկ, ինչպես միշտ
եկել եմ վտանգի ժամանակ»:

Կ. ԶԱՐՅԱՆ

Կոստան Զարյանը մեր այն գրողներից է, որոնց ստեղծագործությունների շուրջ եղել են ամենահակասական կարծիքներ՝ դասական գրող հռչակումից մինչև ավելորդ աղմուկ հանող միջակ մի գրողի համարումը: Մինչև այժմ հրապարակի վրա չկա Զարյանի ստեղծագործությունները վեր հանող ամփոփ մի ուսումնասիրություն: Տարօրինակ է, որ ուշագրավ այդ գրողի ու մտածողի ստեղծագործություններից շատերը մատչելի չեն հայրենի ընթերցողներին, լույս չեն տեսել մեզանում:

Զարյանը հավասարապես ստեղծագործել է թե արձակ, թե չափածո ժանրերում, գրել գրականագիտական ու թատերագիտական հոդվածներ, հանդես եկել արվեստին նվիրված խորհրդածություններով, բանախոսություններ ու դասախոսություններ ունեցել գրականության ու ազգային խնդիրների շուրջ:

Կոստան Զարյանն իր գրական մուտքն սկսեց օտար լեզվով՝ չափածոյով, սակայն: Համբավ ձեռք բերեց «Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի» խորհրդապաշտական պոեմով (1916 թ.), որը սկզբում գրված էր ֆրանսերեն, սակայն լույս տեսավ իտալերեն՝ Միլանում (Զարյանն այդ ժամանակ հայերեն չգիտեր— Ա. Ա.): Նրա մուտքը հայ գրականության եղավ ավելի ուշ՝ 1922-ին Կ. Պոլսում տպագրված «Օրերի պսակը» բանաստեղծությունների ժողովածուով: Սակայն թե՛ սփյուռքում, թե՛ հայրենիքում Կ. Զարյանին իսկական ճանաչում բերեց 1930-ին Բոստոնում հրատարակված «Տատրագոմի հարսը» պոեմը:

Արշակ Չոպանյանին ուղղված 1929 թ. հունվարի 8-ի թվակիր նամակում խոսելով իր «խորհուրդները», «Անահիտում» մաս-մաս տպագրելու հնարավորությունների մասին, Զարյանը գրում է. «Ես ինձ համար կարևոր եմ համարում այս գործի հրատարակությունը առաջաբանով— որովհետև այս բուպեիս գրում եմ ուրիշ գործեր, որոնք թատերական բնույթ ունեն և իմ հին փնտրումներիս և նվաճումներիս շարունակությունն են»¹:

Խոսքն այստեղ այն գործերի մասին է, որոնք հեղինակի մահվանից հետո ամփոփվեցին «Գիրք դյուցազներգությանց» ժողովածուի մեջ:

Թեմատիկ առումով գրքում զետեղված բոլոր գործերը վեր են հանում հայ անցյալ ժամանակների իրադարձությունները, որ մեզ են հասել առասպելների ու բանահյուսական նյութերի տեսքով: Զարյանի այս գործերում իսկապես առկա են թատերգական տարրեր՝ ասացողներ, գուսաններ, երգչախումբ, երաժշտություն և այլն:

¹ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., թ. 2199:

«Առաջերգը» յուրատեսակ նախաբան-առաջադրանք է մնացած գործերի համար, որ բանաստեղծը միտք է հղանում «քաղել դարերի հետևն թաքնված կորած աստղերի կրակը», որոնց շողքերով է հյուսվել հայ ցեղի փարթամ կյանքը և անդուլ դեպքերի ճամփան գծվել: Սակայն քերթողի հոգին լի է տարակուսանքով՝ կարո՞ղ է լսել իր արյան հոսուն կարկաչը, վերագանել սրտի մրրիկներով կերաված վեպը և նրա հզոր երգը: Իսկ հզոր երգը անդադար որոնմամբ է տրվում միայն:

Մարդը ի՞նչ է որ, եթե անդադար չի փոխանակվում
Ավելի հարուստ հոգու գանձի դեմ—
Եթե իր ձայնի սարսուռը արծաթ
Չի նետում ծովի շառաչին առատ—
Եթե իր ձևքի բարդ աշտանակի յոթնաջահերը
Չի հանձնում ցավին որոնումների
Եվ տարալուծվող ժամերի միջից
Չի քաղում մտքի վառ խոյանքները?:

1914 թ. 4. Պոլսում լույս տեսնող (ընդամենը 7 թիվ) «Մեհյան» հանդեսի ոգեպաշտական առաջադրանքը 4. Զարյանի համար մնաց ուղեցույց ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Զարյանը հավատացած էր, որ հայ գրականության խնդիրը հայ ոգու ցուլացումը պետք է լինի: Իսկ այդ ոգին ամենից առաջ պետք է փնտրել հին ժամանակներում:

Գրքում զետեղված բոլոր գործերը միտում ունեն պարզելու այն մեծ առեղծվածն ու խորհուրդը, որ կոչվում է Հայ և Հայաստան: Ահա քերթողի առջև բացվում է մի վեհ տեսարան՝ հսկայական մի տաճար, բացված սեղաններ, ճոխ բարձրագահեր ու կանթեղներ: Դահլիճի խորքում նստած վիպասաններն ու երգիչները վերակոչում են փառավոր առասպելներ: Կոչումքի սրահը լեցուն է հյուրերով: Բանաստեղծն ըմպում է հայ այգիների լիության բերքի գինին և ներշնչումով պատրաստվում երգելու հայոց ձյունաթագ լեռների, խոժոռ ժայռերը, թռչող գետերը, արևահավաք Արարատ լեռը, լուսեղ Արաքսը, Սասնա աշխարհը, Բյուրակնա սարերը ու նաև քաջազուն մարդկանց:

Պոետին հաճախ բառերը աղքատ ու տկար են թվում՝ կերտելու համար հմայքը հին երկրի:

Անցյալի այս պատկերումները նպատակ ունեն կանխագծելու այն միջավայրը, ուր տեղի են ունենալու ծավալվող իրադարձությունները: Գրեթե բոլոր ասքերը գրված են Զարյանի մտածողությանը բնորոշ ոչ սովորական պատկերներով, խորհրդանշական ու մտապատրանքային բազում հնարանքների օգտագործումներով, ուր առկա են մարդիկ ու աստվածներ, հրեշտակներ ու դևեր: Զարյանը ասես հանձն է առել երկրային վեհություններն ու երկնային գորությունները միացնել հայ մարդու հոգեղեն բովանդակության հետ, հայտնաբերել դարերի քառուղիներում գոյակովի ելած հայաշխարհի բարոյական հիմքերը: Զարյանի բանաստեղծական կառույցների «սեղկավազ» խենթությունների մեջ ասես կորչում են պատկերների իմաստային արժեքները, սակայն գրեթե միշտ ներկա է խորքային այն առաջադրանքը, որ հանգում է մարդ արարածի աստվածային բնույթի ոգեկոչմանը:

Չորս ասքերից բաղկացած «Ոսկեմայրը» ներկայացնում է հայ հին աստվածների ժամանակաշրջանը: Երկնային լույսերից ծնված մայր Անահիտը

² 4. Զարյան, Գիրք դյուցազներգությանց, Երուսաղեմ, 1978, էջ 2: Այսուհետև այս գրքից կատարված բոլոր մեջբերումները կտրվեն շարադրանքում փակագծերի մեջ:

իր մեջ կրում է հողի տարփանքն ու գարունների արթնացումը: Բերկրության հայ աստվածուհու անցած վայրերում՝

Հողերի դեզ դեզ պառկած շերտերում,
Սերմ և կուտերը տենդ էին վառում: (27)

Դիցուհու կամոք կյանք պիտի առնի սպառազեն մի այր, որ պիտի լինի կյանքի փոթորիկների ու խավարի դեմ կռվող մի քաջազուն.

Քող այրը լինի արկածի վառ թուր,
Աստղերի ճավում դեկ բռնող մի հուր,
Ամպերի սրտից որոտներ քաղող
Եվ փոթորիկի կրծքերը պատող
Մեծաշունչ մի բուք, մրրիկի անցորդ—
Լուսը խավարից գատող մի որսորդ: (27)

Ջրերի հրե սերմերով բեղմնավորված Մայրը բնության սնվում է «ջրերի վրայով ճամփորդող կենսափոշիով» և ճախրում երկնակամարում: Հայոց Կոնստանդնուպոլիսի թափը կրող Ցուլը հարձակվում է Դիցուհու վրա և հետապնդում նրան յոթ տարի: Կույս Անահիտը և առնական Ցուլը հանդիպում են գետի մեջ, և փայլատակում է սիրո հուրը: Անահիտը ինք տարի իր մեջ կրում է բեղմնավորության ցավերը, որոնցից և պիտի ծնվի հայոց զորեղ աստվածը՝

Այս խոր ցավերից ուզում եմ ծնի
Քեզվոր, գորեղ, լուսե մի աստված:

Մտվող աստվածը Վահագնը պետք է լինի, որի ծնունդը արդեն մեզ ծանոթ երկնածին-ծովածին-կրակածին բնույթով պատկերվում է «Վահագն» աստվածի սկզբում: Վահագնը գերագույն երազանք ունի՝ հասնել «երկինքների վերին շերտին», ուր կանգուն է Մովսիսար աստվածուհու ապարանքը: Այդ ճանապարհին Վահագնը պետք է հաղթի «կես-ձուկ, կես-թռչուն» վիշապին, «յոթ շերտերի յոթ դեկերին», անցնի այլափոխման, վերածնման և հաղթանակների շրջաններից: Սակայն Վահագնի կռիվը այլակերպ հրեշների և շար ուժերի դեմ անձնական երջանկության համար չէ: Նա ամեն կռիվից հետո չոր ու ծարավ հողերին, ածխացած անտառներին կենսաբեր անձրև է պարգևում, հովանավորում կյանքի ծաղկումը, բարիք պարգևում մարդկանց: Երկնային հերոսը պայքարում է երկրի վրա բարիք ու առատություն ստեղծելու համար: Կ. Զարյանի փիլիսոփայական աշխարհընկալումը հանգում է մարդկության՝ «վերափոխության շրջանից» պարտադիր անցման գաղափարին: Ըստ Զարյանի՝ ծնունդ-մահ հաջորդականությունը ենթադրում է նաև վերածնության իրողությունը, որի երաշխիքն է ինքնամաքրումը: Ազգն էլ ենթակա է կյանքի այդ ընթացքին: Եվ հայ ժողովուրդը պետք է կարողանա իր աստվածությունների հետ ինքնամաքրման գնալ.

— Ամեն մի նոր, ջահել աստված...
Պետք է անցնի ծննդի, մահվան շրջաններից՝
Վերածնի, նորից մեռնի, նորից ծնի
.
Որպեսզի դու
Ընդմիջտ հասնես
Քեզ մեջ թաղված վիթխարի վես,
Հրով կերտված գորոթյան—
Պետք է ազգով վերածնվես,
Աճես նրանով, վերափոխվես: (62—66)

Հոգու ավեր պատճառող շարը ծնվում է շորացած երկրի ընդերքից ու նաև՝ նենգ, խորամանկ մարդկանց վարքից:

1919 թ. գրված իր նամակներից մեկում, խոսելով հայ ազգի մասին, Զարյանը դրում էր. «Ազգը աշխարհադրական կամ տեղային, կամ տեղական քանակություն չէ, այլ բարոյական խորհրդաստեղծ կապակցություն մըն է, դոր պետք է ստեղծել՝ աշխատելով անդադար»³: Հենց այդ բարոյական կառույցն ու բարոյական միասնությունն է, որ պետք է վեր պահի ազգին: Այնինչ հաճախ քենն ու խավարը հայոց դաշտերում սփռում են աղետներ:

Վահագնը շտանելով հայ կյանքի այդ ավերը, իջնում է ցած և կոխվ մըրում «արանց ու կանանց» դեմ.

Նա հարվածեց սուտ քրմերին,
Կեղծ ու ծախու մարտիկներին
Ծինակամին շահագործող
Եվ իմաստուն իրենց կոչող
Զարչիներին: (64)

Վահագնը կովում հաղթում է նաև Աժդահակ վիշապին: Աստվածների միջոցով հայաշխարհին փրկություն բերելու հեղինակային ցանկությունը ունի ներքին իմաստ: Հայ ժողովրդի գոյատևման ու փրկության երաշխիքներից մեկն էլ Զարյանը տեսնում է ծագումնաբանական այն շերտերի մեջ, որ դարերի ընթացքում կազմել են հայ տարրի ազգային նկարագիրը, սնել նրա մտածողական ու զգայական ընկալումները: «Վահագն» ասք-պոեմում նույնպես շեշտը դրվում է հայ ժողովրդի աստվածային էության վրա, որ կազմավորվել է հարյուրամյակներ շարունակ խավարի ու շարի դեմ մարտնչելու ճանապարհին: Ինքը՝ Վահագն էլ կյանք վերակերտող ուժի մարմնացում է և իր ողջ գործունեությամբ բարիք ծնող ուժ:

Այդ կոխվը տեեց երկար: Տեեց մինչև
Այն լույս ժամը....
.....
Երբ արտ, արոտ, երբ լեռ և դաշտ,
Վերածնված, թարմ թևքերով
Խոր շունչ առան
Եվ խաղողի ողկույզները
Ծովինարի լույս կրծքերից
Արևաքամ կաթ ծծեցին,
Բոցկլտացին... (68—69)

Պյուցագներգություններում Կ. Զարյանը հաճախ օգտագործել է պատմիչների վկայությունները: Այդ բանը հատկապես զգալի է «Արա աստված» և «Գնել պատանու և Տիրիթի ողբերգությունը» գործերում: «Արա աստված» դյուցազներգական պոեմը, որը հեղինակը անվանում է խաղ գուսանական, բաղկացած է յոթ ասքերից: Նյութը հայ դիցաբանությունից ծանոթ Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելն է, ուր Զարյանը հանդես է գալիս դեպքերի ու իրողությունների յուրովի մեկնող և մարմնավորող: Ի տարբերություն հանրահայտ առասպելի, Զարյանը գործող անձերի քանակը ավելացրել է՝ գուսաններ, վիպասաններ, մեներդողներ, բուրմեր, դեսպաններ և այլն: Բացի այս, Զարյանը Արայի կերպավորման գործում ևս կատարել է մեծ փոփոխություններ: Բավական է ասել, որ Խորենացին Արայի կերպարում առանձնապես չի շեշտում նրա քաջագործությունները և շեշտը դնում է նրա արտաքին բարեմասնությունների վրա: Զարյանը ընդգծում է Արայի գործնական հատկանիշները՝ հայրենասիրությունը, քաջությունը, նվիրվածությունը: Խորենացին Արայի մեջ նաև չի դրել աստվածային գորություններ, այնինչ Կ. Զար-

³ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., թ. 2180:

յանը նրան հանդես է բերում կիսաստված-կիսամարդ՝ թե՛ ծնունդով, թե՛ կարողութիւններով և թե՛ հզորութեամբ: Ավելին, խորենացու պատմութեան մեջ, կարելի է ասել, թուցիկ, կաւճառոտ (խորենացու բառն է) տեղ է տրված Արային: Պատմահայրը շատ ավելի ծավալուն խոսում է Շամիրամի ու նրա գործերի մասին: Այնինչ, Զարյանին հետաքրքրել է հենց Արայի կյանքը, քանի որ նրա կերպարում է, որ կարող էր մարմնավորվել անմնացորդ հայրենասիրութեան ու զոհողութեան այն գաղափարները, որ շատ կողմերով կարևորվում էր սփյուռքահայ կյանքի խնդիրների առումով: Արան հանդես է բերվում որպես սիրո, արարման, հավատարմութեան ու զոհողութեան կրող՝ շղարշված փիլիսոփայական-խորհրդապաշտական երանգներով:

Թեև պոեմում ասվում է, որ Արան մայր Անահիտից և Հայր Արամազդից է ծնվել, այսինքն՝ աստվածային է ու կրակածին, սակայն նա նաև մարդածին է և ներառնում է իր մեջ վսեմութեան ու գեղադեմութեան բոլոր հատկանիշները, որ բնորոշ են երկնային աստվածներին և երկրային այրերին: Արայի ծնունդը միաժամանակ արարում ու արթնացնում է ողջ բնութեան համար՝ բացվում է գարունը, արտը արթնանում է, ջրերը սուրում են, արտույտը երգում է: Արան ներկա է բոլոր վայրերում.

Լեռների ծաղկած լանջերի ծոցում
Նա սրնգահար և աստղահմա
Հովիվ էր պարթև և մոգ նրագի,
Արտերի միջում ակոսներ բացող
Խոփի ակռայով հողերը հերկող,
Եզմերի գլխին հարաչ-հեյ կանչող
Նա վեճ Վարդ էր—
Լայնբուռ ձեռքի արագ շարժումով
Հանդերը ցետող մեծդի Յանող էր: (120)

Արան ներկա է բոլոր սրտերում: Նա բնութեան բեղմնավոր ծաղկումի գերազույն ուժն է, ոգու ներդաշնակութունը: Երբ նա պարում է, այգիներում բարբախում են «նոր ծաղկումների կանաչ սրտերը»:

Գարունը փոխադարձաբար սիրո բույրերով է կիզել նաև Արային: Նա անցնում է Արագած լեռան լանջերով և տեսնում հայրենի վազող աղբյուրների հոսանքում նստած շիկահեր և մերկ աստվածուհուն: Թմբուկի, վինի ուրախ ձայների ներքո կատարվում է Արայի հարսանիքը:

Պոեմի առաջին մասը լեցուն է անմնացորդ սիրով դեպի մարդը, բնությունը, նախնիները, խաղաղ կյանքը: Համընդհանուր այդ սիրո կրողը Արան է, այնինչ Շամիրամի բռնութեան, շարի ու պատերազմի մարմնացումն է, որ հակոտնյա է բանական մարդու իղձերին ու երազանքներին: Զարյանը Շամիրամին նաև արտաքննապես է անհրապույր կերտել, այնինչ խորենացին, նաև Վ. Տերյանը, Ե. Զարենցը, Նաիրի Զարյանը, Շամիրամի մեջ տեսել են թեև վավաշոտ, սակայն գեղեցիկ կնոջը: Սերը մեղք չէ, քանի դեռ արդար է ու գեղեցիկ: Խորենացին նաև կյանքի այս իրողութիւնն էր ընդգծում: Կոստան Զարյանը Շամիրամի մեջ ոչինչ դրական չի տեսնում: Նա իր բացասական գծերով հակադրումն է Արայի ու հայոց դիցուհուն: Շամիրամի շնչինությունը շեշտելու համար Զարյանը իր պոեմում որևէ առիթով նրան նույնիսկ չի էլ հանդիպեցնում Արային:

Երբ լուսեղ Արայի համբավը հասնում է «ասորիների անապատ երկիրը», ուր նստած էր «օձի և աղավնու զուգավորումից ծնված» Շամիրամը, իսկույն-ևեթ սևավարս և թուխ այդ բիրտ տիրուհու մեջ ծնվում են «մեղք, քրտինք և սեռ» դրսևորող ցանկութիւններ:

Նրա երակներում հոսող արյունը,
Նրա հաստ շրթերի տարփագին դողը,
Նրա մուօ կրծքի բոցն ալիքը,
Նրա պորտը տանջող բուքը, մորիկը—
Խարույկի նման բոցկլտում էին,
Փոթորկում, կիզում նրա գիշերները,
Դաշունահարում նրա գրգռները: (141—142)

Տոփանքով մոլեգնած Շամիրամը, սակայն, ամենից առաջ նվաճող է: Արայի հրապույրը և իր ցանկությունները դեռևս քիչ են Շամիրամի համար: Աշխարհակալությունը նրա գերագույն գրգիռն է, որ նրան գործունեություն է մղում: Սակայն կա նվաճման բարդությունը: Մեծ քրմապետը նրան զգուշացնում է, թե որքան գեղեցիկ է Հայաստան աշխարհը, նույնքան էլ համառ են այն պաշտպանող մարդիկ:

Ասեմ, Հայերը
Ըմբոստ մարդիկ են, հոգիով կառչած
Իրենց մեծ երկրին: Եվ ի՞նչ երկիր է... (145)

Ամեն ինչ հստակված է՝ կա գեղեցիկ Արան, և կա գեղեցիկ երկիրը՝ փարթամ ու զովաշունչ, լցված լուսավոր այգ ու պարտեզներով, ձյունագագաթ հսկա լեռներով: Եվ հնչում է Շամիրամի կամքը՝ «Եթե այդպես է... ուզում եմ նրան»:

Արան հոգով ու մարմնով կապված է իր երկրին ու հողին: Նա չի կարող լքել իր ժողովրդին, նաև՝ իր վեճ դիցունհուն:

Զարյանը հեռացել է Արայի կնոջ՝ Նվարդի անվան տարածված հիշատակումներից (Խորենացի, Վ. Տերյան և ուրիշներ), նրան պարզապես անվանում է Դիցունհի: Ու թեև Արան ու Դիցունհին աստվածային շատ հատկանիշներով են օժտված, սակայն պոեմում նրանք նաև մարդկային ու իրական շոշափելի անձնավորություններ են, լցված սիրով ու հավատարմությամբ, իսկ նրանց գործունեության վայրը ժողովրդական կենցաղով ու աշխատանքով բարախուն Հայաստանն է:

Արայի մերժումից հետո անխուսափելի է դառնում պատերազմը:

Դյուցազներգության 5-րդ ասքը սկսվում է հայոց աշխարհի խաղաղավետ կյանքի պատկերմամբ՝ բերքահավաք է ու այգեքաղ: Պատկերը հիշեցնում է «Տատրագոմի հարսը» պոեմի երկրորդ գլխում ներկայացվող իրադարձությունները, երբ, դարձյալ հարձակման ու թալանի նախաշեմին, հայաշխարհը զբաղված էր իր արտ ու քաղով: Ամեն անգամ հենց այդպիսի պահերին է գալիս պատերազմը, նախճիրն ու բռնությունը:

Յոթ անգամ հազար
Ուտքով քայլողներ, երեսուն հազար
Հեծելազորքեր, հարյուր թիսում փիղ,
Վեց հարյուր ուղտեր, զրահավոր կառքեր,
Չորս կողմից ժողված հաստաշուրթ ցեղեր... (160)

Արան թեև կովում է քաջաբար, սակայն ընկնում է մարտում: Սգում են Տայքն ու Գուգարքը, Մոփքն ու Սասունը, Փայտակարանն ու վեա Արարատը:

Պատահական չեն հայկական պատմական տեղանունների այս հիշատակումները: Ամեն անգամ Զարյանը այդպիսի հիշատակումներ անում է ոչ միայն մեծ երկրի ու անցյալի իրողությունը շեշտելու համար, այլև բորբոք պահելու այն կարոտը, որ հարյուրամյակներով ապրեցրել էր հայությանը հնում ու նաև ապրեցնելու էր նոր ժամանակներում:

Շամիրամի աստվածների ու մոգերի անզորությունից հետո, Արայի գին

որոշում են այրել: Զարյանը Արայիս այդպիսի վախճան չի կանխորոշում, այլ նրա կերպարի մեջ մուծում է հարատևության գաղափարը: Եվ Արայի հավատարիմ շորս շները, «որ կապված էին Արայի լույսին», բոց լեզուներով լիզում են նրա վերքերը և կենդանացնում:

Այնաշխարհի և այսաշխարհի սահմանադիժը անցնելու Արայի դատողություններում Կ. Զարյանը դնում է այն միտքը, որ անհրաժեշտ է համառ պայքար և մարմնի մեջ բոցկլտացող ջահ՝ ամեն անգամ, երբ խավար է ու իղձերը մեռած են, երբ կատաղի կռիվ է ու բաժանումների թշնամանք: Լյսպես, միայն այսպես է, քանի որ՝ «Խաղաղությունը ծնվում է ներսի մաքառող ուժից»: Այդ մաքառող ուժն է, որ պիտի ապրեցնեք գեղեցիկն ու լույսը, երկիրն ու հողը, ժողովրդին, Զարյանի խոսքերով ասած՝ Ամբողջությունը: Աստվածներն անգամ «իրենց մեջ ապրող հույզի աշխարհից, իրենց աստղերի ոլոր շրջանից շատ շին հեռանում»: Ի վերջո, Արան հանգում է կյանքի ու աշխարհի փրկիստփայական ընկալման հավերժական դրույթներից մեկին՝ «Ամեն ինչ, որ կա, ե՛ս կամ նրա մեջ»: Մովի ու կյանքի այդ անվերջ պայքարը իր մեջ առնելով, հերոսը դառնում է լինելության մի նոր ձև ու կերպ, միություն մի նոր.

**Հասկացա, որ երբ երկու ենք ասում՝
Չկա երկուսը, երեք ենք ասում՝
Չկա երեքը, չկա հազարը,
Այլ կա միաձույլ Մեկություն մի վառ: (176)**

Հասնելու համար այդ մեկությանը, որ ինքը՝ «լրված ամբողջությունն» է, այսինքն՝ ինքնակա անհատը, աստված-մարդը, պետք է «բաժանումների թշնամուն հաղթել և ալլափոխվել»: Հիշենք, որ մարդու մեջ թաղված վիթխարի զորության հասնելու համար Զարյանը այդ նույն վերափոխության խնդիրն էր առաջադրում նաև «Վահագն» ասքում՝

**Գետք է ազգով վերածնվես,
Աճես ցրանով, վերափոխվես:**

Չարի վերացման, միասնության հաստատման այս պատգամը «Արա աստված» ասքի հիմնարար գաղափարներից մեկն է, որ երաշխիքն է երկրի վրա իսկական մարդկային ու աստվածային կյանքի հաստատման:

Թեև այս ստեղծագործության բոլոր հատվածները չէ, որ հագեցած են իմաստային խտությամբ, տեղ-տեղ շարադրանքը մանվածապատ է ու վերացական, սակայն ամբողջության մեջ համալրում է Կ. Զարյանի մտածական դաշտը, հարստացնում նրա թեմատիկ ընդգրկումների ոլորտը, մեկ անգամ ևս ընդգծում գրողի գեղագիտական մտասեռման կիզակետը, որ հանգում է ամեն ինչում հայկականի ու ազգայինի գերակայության:

Ասացինք, որ Զարյանը իր դյուցազներգությունները գրելիս լայնորեն օգտագործել է բանահյուսական նյութը, սակայն միշտ չէ, որ հարազատ է մնացել նրան: Զարյանը մերթ հեռանում է պատմական փաստերից, մերթ էլ ամենայն մանրամասնություններով խորանում (ինչպես, ասենք, «Գնել պատանու և Տիրիթի ողբերգությունը» գործում) պատմիչների հաղորդումների մեջ, երբեմն էլ տեղաշարժում է պատմական ժամանակաշրջանը, հերոսների վարքագծում ու գործունեության մեջ ներմուծում նորություններ: Այսպես, «Ասացված ցուլամարտ Մհերի համար» երկու ասքից բաղկացած գուսաներգության մեջ Զարյանը պատկերում է հեթանոսական բազիլեներով ու մոգերով առկա մի շրջան: Մհերի կերպարի մեջ պահպանվել են մեր էպոսից եկող կերպավորումները՝ թուլլերին պաշտպան լինելու պատրաստակամությունը, բարությունը, աշխարհը ազատելու ինքնազոհությունը, գերբնա-

կան ուժի առկայությունը և այլն: Ինչպես և Զարյանի մյուս դյուցազններգությունների գլխավոր հերոսները, Մհերը նույնպես ծագումով աշխարհային չէ: Նա ծնունդ է առել Հայաստանի ընդերքից՝ որձաքար մի ժայռից և ուղիղ կապ ունի Անահիտ աստվածուհու հետ, որը մի էությունից անընդհատ անցնում է մի այլ էության, «փնտրում լույսում իր էության ձևը, կերպը անմահության»: Զարյանի պատկերմամբ Մհերը նման է հայ նախահայրեր արմեններին (ի դեպ, սա հայ ժողովրդի կազմավորման ու տեսակի ազնվացման զարյանահան իդեալն է, որի մասին Զարյանը շատ դատումներ ունի մանավանդ «Բանկոպը և մամոնտի ոսկորները» վեպում) և ըստ էության կրողն է Միհրյան, այսինքն՝ հեթանոսական, ժամանակների զաղափարների և իրողության:

Մհերը կատարյալ է թե՛ իր ֆիզիկական ուժով, թե՛ մտավոր կարողություններով, թե՛ նվիրման զոհողությամբ և թե՛ անմահության խորհրդով: Մհերը լսում է շարաբեր Յուլի ձայնը, որ գալիս է երկրի խորքերից: Նրա աղետաբեր թափառումները երկրի վրա քանդում են գետեր ու ամբարտակներ: Նա անզուսպ շարունակում է, ստորին կիրքը: Մհերը կոպում է Արագածի լանջերին արոտ անող Յուլի հետ և երկիրը ազատում գալիք աղետներից: Կիսակենդան Յուլին Մհերը փակում է քարայրում և հսկում Հայաստան աշխարհի խաղաղությունը, լսում ու տեսնում ամեն բան: Ու երբ Դև Յուլը քանդում է քարայրի մուտքը և դուրս գալիս ավեր ցանելու, դաշտեր տրորելու, մրրիկ դառնալու, Մհերը երկրորդ անգամ է դուրս գալիս նրա դեմ և սպանում:

4. Զարյանի համար մարդկային իդեալը անփոփոխ է հանդես գալիս նրա գրեթե բոլոր գործերում: Նյութից առավել, մարդ արարածի, ուրեմն նաև՝ երկրի համար, կարևոր է հոգեկան ազատությունը: Այս նույն միտքը «Ասացված ցուլամարտ Մհերի համար» գործի մեջ բանաստեղծական հետևյալ ձևակերպումն է ստանում.

Նա ոչ միայն տվավ նյութի առատություն,
Այլ և տվավ հոգու հանգիստ և վեհություն,
Տվավ խղճի հանգստություն,
Պատվո խորին գիտակցություն: (82—88)

Զարյանի դյուցազններգական գործերը նպատակ ունեն նաև ընդգծելու հայ ժողովրդի աստվածային ծնունդը, նրա ազնվական բնույթը և շարի դեմ պայքարելու հավերժական դիրքորոշումը: «Հայկ դյուցազուն» չափածո ստեղծագործության մեջ ևս հերոսը ինքնահաստատման ճանապարհի մեջ է: Աստվածները, ոգիները, երկինք ու երկիր, աստղեր ու ծովեր շաշում են ու փոթորկվում: Մարդկությունը նոր հայրենիքներ է որոնում: Դեպի հեռուններն է իր հայացքն ուղղում նաև Թրակիո կողմից առաջացող Հայկ Դյուցազնը, որ կանչում է իր տոհմի մարդկանց.

Ես տեսնում եմ Աջի կողմից,
Ջախի կողմից և Մեջտեղի բերդի կողմից,
Կատաղավազ առաջացող չար դևերին:
Ուր կպցրած երկնքի մութ ամրոցներից,
Ուժ ե՛մ անում, որ խորտակեն եղած կարգը,
Տարածության ձևը, սարքը...
.....
Ես աչքերս թաթախեցի
Իմ աստղերի նշաններում
Եվ իմ ճամփան ընտրեցի: (98)

Հայկը իր մեջ կրում է երկնային տարերքի թափը: «Սրտով ընտրած

երկիր» հասնելու համար Հայկի կողքին են կանգնում ազատաբաղձ հովիվներ, աղեղնավոր մարտիկներ, հող հերկողներ, արհեստավորներ:

Հաղթելով օտարացեղ բազում հսկաների՝ Հայկը յուրայիններով քայլում է դեպի հարավ՝ գտնելու համար իր ցեղի հավիտենական կյանքի հիմքերը: Հայկը ոչ միայն հուժկու մարտիկ է, այլև Տեսանող և Իմաստուն մի այր, մեծ Օրենսդիր: Քաջբրի անցումը լեռներով ու խորխորատներով, դաշտերով ու անտառներով տևում է տարիներ, մինչև:

**Մի օր հասան Կապադովկիա և կանգ առին
Արածաճու գեղածիճաղ, լայն ափերին:
Այնտեղ տեսան արյունակից ուրիշ տոհմեր
Եվ Փռուզիայից եկած Դիցեր և աստվածներ: (102—108)**

Սակայն Հայկին անընդհատ կանչում է Միջագետքի պայծառ արևը: Հայկի հզորության լուրը «թուխ մորթով, ձիթապտուղ մեծ աչքերով» մարդիկ հասցնում են Բելին, որը միևնույն ժամանակ աստված էր ու բռնակալ: Բելը հրամայում է իր մոտ կանչել Հայկին՝ «թող գա շոքի, երկրպագի, հպատակի»: Հայկը չի հնազանդվում Բելի կամքին և կռվելով նրա ուղարկած դև մարդկանց դեմ՝ լքում է տոթակեզ անապատները և հասնում Սասնա մեծ ու լի բարձունքներին:

**Ինչ փառավոր և ինչ լուսեղ տեսարան էր փռվել վարը,
Հսկայական մի լիճ կապուտ: Նրա ափերին՝ վսեմ ցգված,
Երկու լեռներ մեճակ կանգնած: (111)**

Հաղորդության մեծ կապով են կապվում Հայկի մարդիկ այս վայրի հետ, ուր պիտի վերածնվի ցեղը, հաստատի իր ոգու հիմքն ու սրբազնանա: Բելը նոր հրավեր է ուղարկում Հայկին՝ թողնել ցուրտ երկիրը և ետ վերադառնալ (հիշենք Խորենացու վկայությունը. «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր... սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր»⁴):

Հայկի ցեղը այլևս չի կարող բռնություն տանել և հնազանդվել, քանի որ «ինքնիշխան տոհմի կամքը ճրագ է ազատ, արարչական»: Եվ Բելի բահակների դեմ ելնելով՝ Հայկը պատվիրում է մոտենալ այն վայրին, ուր կանգնած կլինի Բելը: Հայկի երեքթևյան նետը ճեղքում է Բելի թիկունքը և վարզլորում Տիտանին, իսկ նրա դիակը հրամայում է թաղել բլրի վրա:

**Ի տես մարդկանց, իր բազմաթիվ ժառանգներից
Եվ դարերում հասակ առնող իր մեծ ցեղին: (122)**

Ինչպես նկատելի է, 4. Չարյանը շատ չի հեռանում Խորենացու պատմությունից: Սակայն ասքի շատ հատվածներ կրում են խորքային և իմաստային նոր շեշտադրումներ, որ և համահունչ էին բանաստեղծի ապրած տասնամյակների առաջադրած խնդիրներին, և ուշագրավ՝ չափածո խոսքի արտահայտչամիջոցների տեսակետից:

Չարյանը պատմական անձերի կյանքին ու գործին դիմելիս էլ ընտրողական մոտեցում է ցուցաբերում՝ ջանալով գրական ուրույն մոտեցում տալ ճակատագրական դեր խաղացած անձնավորությունների գործունեությանն ու վարքին:

Ինչպես հայոց պատմության, այնպես էլ գրականության մեջ խիստ սակավ են մանավանդ այն դեպքերի արծարծումները, երբ հայ թագավորներն ու իշխանները աշխատել են զենքի ուժով ընդլայնել իրենց երկրի սահմանները: Այսօրվա դիրքերից գնահատելով «նվաճողական» այդ գործունեությունը-

⁴ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 87:

նը, հին ժամանակների համար, երբ դեռ ժողովուրդները նոր-նոր էին հաստատում իրենց ոգու հիմքերը և հայրենիքի սահմանները, այլ բան չէր, եթե սեփական երկրի հեռու ու մոտ սահմանները ապահովելու մի ձեռնարկ: Հերոսացման, կովի ու նահատակման, կարոտի ու ընդվզման իրարամերժ այդ իրողութիւնները կարող էին Զարյանի մտասեռման շրջանակներից դուրս մնալ: Իհարկե ոչ: Եվ պատահական չէ, որ Զարյանը անդրադարձել է նաև Տիգրան Մեծի ժամանակներին ու նրա աշխարհակալությանը:

«Հատված Տիգրան Մեծի թվելյաց երգից» ասքում Զարյանը պատկերում է հայոց գահաժառանգի պատանդ տարվելը մարաց Միրզատ (Միհրդատ) թագավորի կողմից, Տիգրանից խոստումներ առնելը և ազատ արձակելը: Հայ նորընծա արքան հավաքում է իր երկրի ուժերը և պատրաստվում մեծադորդ կռիվների:

Թող մեր երկրի արևազեն ձիավորը
Ասպատակի,
Ճախրի անցնի
Վայրաբարո և խուժամուժ աշխարհներով
Եվ իր մտքի սուրը մեծդի, մրրկահով
Արևելքին, արևմուտքին պարտադրի: (184)

Շուտով Տիգրանը փշրում է երկրի սահմանները գերող շղթան, հետ վերադարձնում Մեծ Հայքի նվաճված մասերը, հասնում մինչև Կապադովկիա ու Իբերիա և սպառնում Պոնտոսի շուրջ ժփացող ծովին: Տիգրան թագավորը ուզում է վերականգնել Հայաստանը մաքի լույսով, մեծափարթամ քաղաքներով, ոսկի բերքով ծածկել հովիտներ: Ըստ Զարյանի մտահղացման, Տիգրան Մեծի նվաճումները բարիք պիտի ծնեն ու շենացում: Սակայն որտեղ ուժ կա, կու և նախանձ: Մարաստանի նենգամիտ Աժդահակ թագավորը որոշում է խորամանկութամբ հաղթել Տիգրանին.

Ինձ թվում է թշնամու դեմ թշնամաճալ,
Ոխդ ցույց տալ, սպառնաճալ—
Հեշտ միջոց է կորսվելու:
Պետք է սիրո դիմակ հագնել
Եվ նրա դեմ թակարդ լարել: (196)

Աժդահակը խնդրում է Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու ձեռքը, հուսալով նրա միջոցով դավել եղբորը: Գեղեցիկ ու խելամիտ Տիգրանուհին կռահելով ամուսնու մտադրությունը, լուր է ուղարկում եղբորը: Տիգրանը թողնում է երկրի շենացման գործը և կովի ելնում պարթևական զորքերի դեմ: Պատերազմի դաշտում հանդիպում են Տիգրանն ու Աժդահակը, որոնց զարկերից սասանվում են երկիրն ու երկինքը: Տիգրանը հերթական զարկից հետո, երբ հետ է քաշում իր նիզակը, դուրս է քաշում նաև Աժդահակի դեռ բաբախող թոքի կեսը: Այնուհետև նա պարտված մարերին բռնի բնակեցնում է Գողթնի սահմաններում, իսկ Աժդահակի կնոջը՝ Անուշին, որ «վիշապների մայրն էր», բնակեցնում է մեծ լեռան փլված կողերին:

Տիգրան Մեծին նվիրված այս ասքը մյուս դյուցազներգական գործերից տարբերվում է նրանով, որ այստեղ որպես գործող հերոսներ բացակայում են հրեշները, ոգիները, դևերը, թատերական դեկորները և միջոցները, բաներ, որոնցով այնքան լեցուն են Զարյանի լայնաշունչ շափածո գործերը:

4. Զարյանի շափածոյի ուշագրավ գործերից է նաև «Գնել պատանու և Տիրիթի ողբերգությունը» պոեմը, որ դարձյալ ներկայացնում է հայ նախնի ժամանակների կյանքը, պատկերում պալատական հարաբերությունները, այն

բարդ ու թշնամական պահվածքը, որ հաճախ ծնվում էր նախանձի ու խանդի հողի վրա և հարուցում մարդկային ողբերգություններ:

Արշակ թագավորի հորեղբորորդի Գնելը և Սյունյաց նախարար Անդոզկի դուստր փերիատես Փառանձեմը ամուսնանում են: Փառանձեմի գեղեցկությամբ հիացած են ամենքը՝ «Կին չէ, տոն է»: Իսկ Տիրիթը՝ թագավորի մյուս հորեղբորորդին, մտատանջությունների մեջ է՝ ուշացավ Փառանձեմին տիրելու:

Պոեմում պատկերվող տեսարանները, իրադարձությունները, միջավայրը շոշափելիության աստիճանի կենդանի են ու իրական՝ գծված հավաստի գույներով: Զարյանի պոեմներին բնորոշ վերացական ու խորհրդապաշտական մտածողությունը իր տեղը զիջել է իրապաշտական մոտեցումներին: Գնելի և Փառանձեմի երջանիկ սիրո երգը վարակում է ընթերցողին: Տիրիթը անկարող է զսպել իր զգացմունքները: Մոլեգնում է խանդը, սակայն Տիրիթը ամեն անգամ հանդիպում է Փառանձեմի «ցասումի սուր դանակին»:

Տիրիթը Արշակի մոտ զրպարտում է Գնելին.

Ուզում է քեզ գահից զրկել
Տեղդ նստել: (226)

Սկսվում են թագավորական դավերն ու լրտեսումները Գնելի դեմ: Փառանձեմին գուշակ կինը ասում է.

Պիտի ողբաս զերթ մի այրի,
Արցունք թափես զերթ խեղճ զերի,
Զիճչ աքեղայր, քույրիկ լինես
Եվ տառապես և ձայն աժես: (282)

Մոտենում է հայոց նավասարդը: Թագավորի հրամանով Գնելի մոտ է գալիս Մամիկոնյան Վարդանը և հավաստիացնում, որ թագավորը զղջացել է քեն պահելու համար և Գնելին ու Փառանձեմին հրավիրում է Շահապիվանի բերդ՝ ցույց տալու համար նրանց հանդեպ տածած իր սերը: Գնելը տանջանքների ու տեսիլքների մեջ է. շիհի թագավորը խարում է:

Զարյանի այս պոեմի կարևոր արժանիքներից մեկը հենց դառնում է իր հերոսների ներաշխարհում կատարվող հույզերի հավաստի պատկերումը, մի բան, որ նախորդ գործերում գրեթե պակասում էր:

Հասնելով արքունատեղի, Գնելին կապկպում են Արշակի մարդիկ և տանում գլխատելու: Լուրը հասնում է ներսես կաթողիկոսին՝ մինչ նա հորդորում է արքային հետ առնել բարկության պահին տրված հրամանը, ներս է մտնում դահիճը: Հրամանը կատարված է: Ներսեսը անիծում է Արշակին՝ նրան դատապարտելով դաժան ճակատագրի ու լքվածության (Արշակը, ըստ խորհնացու, ինքնասպան է եղել): Փառանձեմը մեղադրանքի խոսքեր է ասում թագավորին, որը կոծում էր Գնելի դիակի մոտ և Փառանձեմի գեղեցկությամբ շլացած տարփանք տածում նրա նկատմամբ: Տիրիթը ևս չի ծածկում իր ցանկությունը և «մեռելի կնոջ մոտ» մարդիկ է ուղարկում, որոնք Փառանձեմին ասում են.

Այդքան էլ շատ մի տառապիր,
Իզուր տեղը մի շարչարվիր,
Ես, Տիրիթս, ավելի եմ քան մեռածը,
Ես, որ ահա, գլխի բերի սղդ արկածը,
Որպեսզի քեզ կնության առնեմ,
Սիրո կրակս բավարարեմ: (27)

Փառանձեմը ամենքին պատմում է Տիրիթի քստմնելի արարքը: Արշակը տեղեկանալով իրողությունը, հրամայում է սպանել Տիրիթին: Արշակը կին է առնում Փառանձեմին, որը շարունակում է մնալ Գնելի հուշին կապված և

շտրեկ Արշակին: Արշակը Հունաստանից բերել է տալիս մի ուրիշ կին, որի վերջը ողբագին է (Զարյանը նկատի ունի Փավստոսի այն հաղորդումը, ըստ որի Մրջյունիկ քահանայի ձեռքով «կյանքի դեղի» (հաղորդության հացի) միջոցով թունավորվել է Օլիմպիան):

4. Զարյանը իր գործերում մեծ մասամբ հավատարիմ է մնում նաև հայ պատմիչների գաղափարախոսությունը՝ Երկիրը ավերվում է, երբ բացակայում է միաբանությունը, երբ թագավորը բռնակալ է: Սակայն շատ են դեպքերը, էրբ երևույթները այլ մեկնություններ են ստանում: Այսպես, «Գնել պատանու և Տիրիթի ողբերգությունը» ասքում Զարյանը էի կողմից դրսևորում է ներքին հարազատությունը խորենացու պատկերած Արշակի կերպարի էությունը՝ ինքնահավան, կեղծ, նենգ և այլն, մյուս կողմից, ասենք Փառանձեմի կերպարի պատկերումներում, ցուցաբերում է լրիվ հակառակ մոտեցում պատմահոր նրան տրված բացասական գնահատումներին:

Զարյանը այս գործում կատարյալ հարազատություն է դրսևորում Գնելի և Տիրիթի կերպարների փավստոսյան մեկնություններին: Կարելի է ասել, որ Զարյանի այս ասքը ուղղակի շափածո փոխադրումն է Փավստոսի պատմածների:

Նախ, Փավստոսն է, որ ի տարբերություն խորենացու, իր պատմության մեջ խոսում է Փառանձեմի գեղեցկության մասին, մի բան, որը գտնում ենք նաև Զարյանի սույն գործում: Տիրիթի սիրահարության և նենգության պատմությունից հետո Փավստոսը, իրոք վկայում է, որ Արշակը Գնելին իր մոտ է կանչել նավասարդի տոներին, մի բան, որ խորենացու մոտ չկա (այստեղ թագավորն է գնում Գնելի մոտ): Զարյանի ասքում հանդիպող Վարդան Մամիկոնյան, Ներսես կաթողիկոս, Երազմակ դահիճ, Շահապիվան, Առավյուտն, Լիսին և այլ անձնանուններն ու տեղանունները ուղղակի կրկնություններ են: Զարյանը անփոփոխ է թողել նաև շատ մանրամասներ, որ հաղորդում է Փավստոսը՝ Գնելի գիշերով ճանապարհվելը, առավոտ վաղ տեղ հասնելը, ձիուց իջեցվելը և անմիջապես գլխատվելը, Փառանձեմի լուր տանելը Ներսեսին, Արշակի կեղծ քուն մտնելը, Տիրիթի մարդկանց այցը Փառանձեմին և այլն: Զարյանը պոեմում պահպանում է նաև դեպքերի այն հաջորդականությունը, որ կա Փավստոսի մատյանում:

Գնելի և Տիրիթի կյանքի այս իրողությունները մեր երկու պատմիչներն էլ ընկալում են որպես պատմական իրողություն՝ շեշտը դնելով պալատական խարդավանքների վրա: Այնինչ, Զարյանը «Գնել պատանու և Տիրիթի ողբերգությունը» գործով ստեղծել է նաև սիրո և հավատարմության մի ուշագրավ պատմություն, ուր դրսևորվում են մարդկային կրթերն ու հույզերը, կասկածներն ու անկումները, գեղեցկություններն ու փուլզումները:

Զարյանի ողջ դյուցազներգությունը շնչում է ազգային պատմության ոգով: Հեղինակն իր ստեղծագործական պաթոսը օգտագործում է՝ մեկ անգամ ևս ընդգծելու այն արժեքները, որ դարերի ընթացքում պահպանել են հայության նկարագիրը և հպարտությամբ լցրել նրան: Ասքերում օգտագործված զարյանական հարուստ լեզուն, բանաստեղծական պատկերները, ռճավորման նրբերանգները գեղարվեստական ուշագրավ միջոցներ են դառնում հեղինակային վերոհիշյալ նպատակադրումների իրականացման:

А. А. Авакян— Эпос Костана Заряна.— Многие из произведений писателя для широкого круга читателей доньше остаются неизвестны. Как поэзия, так и проза этого многожанрового автора богаты художественной и идейной глубиной. Статья охватывает эпические произведения Заряна, делается попытка раскрыть их художественную ценность.